



ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

« 10 » փետրվարի 2023թ.

ՀՐԱՄԱՆ N 38-Ա

«ՇԻՐԱԿ ԱՎԻԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «Զ» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴԻՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1936-Ն որոշման հավելվածով, հիմք ընդունելով Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2021 թվականի հոկտեմբերի 14-ի N 529-Ա հրամանով տրամադրված N 04 հավաստագիրը և 2022 թվականի նոյեմբերի 16-ի N 576-Ա հրամանի N 1 հավելվածը և «Շիրակ Ավիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2023 թվականի փետրվարի 8-ի թիվ SA-758 գրությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Նկատի ունենալով, որ «Շիրակ Ավիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (ԻԱՏԱ) ծմեռային ժամանակահատվածից սկսած՝ 2023 թվականի փետրվարի 11-ից՝ շաբաթական 1 (մեկ) չվերթ հաճախականությամբ Երևան/UDYZ/-Ուֆա/UWUU/ և Երևան/UDYZ/-Սարատով/UWSG/ երթուղիներով Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացմամբ Ընկերության կողմից գրության ներկայացման օրվա՝ 2023 թվականի փետրվարի 8-ի դրությամբ՝ բավարարում է


Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով նախատեսված պայմաններին, չսպասարկված ուղղությունների և չվերթների հաճախականությունների պահանջներին՝ Ընկերության միջոցով Երևան/UDYZ/-Ուֆա/UWUU/ և Երևան/UDYZ/-Սարատով/UWSG/ երթուղիներով մեկնող ուղևորների վրա տարածվում է «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» ենթակետով սահմանված արտոնությունը:

2. Սահմանել, որ սույն հրամանի առաջին կետով նշված Երևան/UDYZ/-Ուֆա/UWUU/ ուղղության համար արտոնության տրամադրման սկիզբը 2023 թվականի փետրվարի 11-ն է՝ 11 ամիս ժամկետով՝ ամիսների նվազման կարգով՝ հաշվի առնելով Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 23-ի N 329-Ա հրամանի 1-ին և 2-րդ կետերը: Սահմանել, որ սույն հրամանի առաջին կետով նշված Երևան/UDYZ/-Սարատով/UWSG/ ուղղության համար արտոնության տրամադրման սկիզբը 2023 թվականի փետրվարի 11-ն է՝ 36 ամիս ժամկետով:

3. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի հանձնումն Ընկերությանը:

4. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի տեղադրումը Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կայքում:

 Recoverable Signature

X 

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266 ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ